ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

« 10 » 04 20 25 թ. ք.Երևան Թիվ 471-Հ

ԵՐԵՄ ՎԱՆԻՉԿԱՅԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ
ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 09-ի եզրակացությունը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 20-րդ հոդվածի 7-րդ մասով.

հրամայում եմ՝

1. Արդարադատության երրորդ դասի խորհրդական Երեմ Վանիչկայի Դանիելյանին նշանակել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Սպիտակի քննչական բաժնի պետ (գլխավոր 3-րդ)՝ ազատելով նրան Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչի (առաջատար 3-րդ) պաշտոնից:

2. Երեմ Դանիելյանին հանել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ծառայողական առաջխաղացման ցուցակից:

3. Աշխատավարձը սահմանել համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ